ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 9/9.1-Լ

ք. Երևան 26 մայիսի 2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԸ ԱԿԱԴ. Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻՆ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 2-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետերով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝

ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնը միաձուլման եղանակով վերակազմակերպել Ակադ. Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության, Հայ նորագույն գրականության պատմության ամբիոնների հետ և վերակազմակերպված ամբիոններն անվանակոչել.

ա. Ակադ. Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոն,

բ. Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ